ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2024թ. հունվար-դեկտեմբեր

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 8.0%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ նվազել է -1.4 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %



2. Ծառայություններ

- Ծառայությունների ծավալի աճը կազմել է 10.6%, ինչն ավելի բարձր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Ծառայությունների աճին դրական են նպաստել հետևյալ ենթատեսակները. ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը՝ 6.0 տոկոսային կետով (տ/կ), «տեղեկատվություն և կապ»՝ 2.4 տ/կ, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 0.9 տ/կ, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտը՝ 0.6 տ/կ, անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտը՝ 0.5 տ/կ, մշակույթ, զվարճություն և հանգստի ոլորտը՝ 1.1 տ/կ, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտը՝ 0.3 տ/կ, վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտը 0.2 տ/կ, կրթության ոլորտը՝ 0.1 տ/կ, և սպասարկման այլ ծառայությունների ոլորտը՝ 0.1 տ/կ:
- Բացասական ազդեցություն է ունեցել տրանսպորտ՝ -1.6 տ/կ:

Ծառայությունների ծավալի աճ, %



3. Առևտրի շրջանառություն

- Ներքին առևտրի շրջանառության ծավալի աճը կազմել է 17.0%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Առևտրի շրջանառությանը դրական են նպաստել. մանրածախ առևտրի և մեծածախ առևտրի ոլորտներում գրանցված համապատասխանաբար՝ 7.9% և 23.4% աճերը:
- Բացասական ազդեցություն է ունեցել ավտոմեքենաների առևտրի ոլորտի -4.3% կրճատումը:

Ներքին առևտրի շրջանառության աճ, %



4. Շինարարություն

- Շինարարության ծավալի աճը կազմել է 14.5%: Աճին դրական են նպաստել՝ պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության 14.8% աճը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալի 54.2% աճը (որից՝ ՎԶԵԲ-ն՝ 5.7 անգամ, ԱԶԲ-ն՝ 58.5%, ԳԶԲ-ն՝ 27.8%, ԵՆԲ-ն՝ 34.3%), բնակչության միջոցներով իրականացվող շինարարության 33.8% աճը և կազմակերպությունների միջոցներով՝ աճը 11.1%:
- Բացասական ազդեցություն են ունեցել՝ համաշխարհային բանկի միջոցները՝ -1.0%, համայնքների միջոցներով իրականացված շինարարության -10.8%, մարդասիրական օգնության միջոցներով -0.3%:

Շինարարության ծավալի աճ, %



Արտաքին առևտրաշրջանառության ծավալը հաշվետու ժամանակաատվածում կազմել է 30,159.1 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 41.5%, որից արտահանման ծավալը կազմել է 13,092.2 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 53.1%, իսկ ներմուծումը՝ 17,066.9 ԱՄՆ դոլար, աճը 33.8%:

5. Արտաքին առևտուր

5.1 Արտահանում

Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել այլ երկրների գծով՝ 2.2 անգամ: Կրճատում են գրանցել ԵԱՏՄ երկրները՝ -10.7%, ԵՄ երկրները՝ -13.8%-ով և ԱՊՀ երկրների գծով -10.4%:

- Արտահանման աճին դրական են նպաստել հետևյալ ապրանքախմբերի աճերը. կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք աճը՝ 37.6%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 78.3%, բուսական ծագման արտադրանք, աճը՝ 29.6%, պատրաստի սննդի արտադրանք՝ 6.9%, հանքահումքային արտադրանք՝ 15.1%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 16.7%, թուղթ և թղթից իրեր՝ 12.3%, մանածագործական իրեր՝ 3.9%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 12.0%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 2.5 անգամ, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 20.0%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 12.9%, արվեստի ստեղծագործություններ՝ 38.7%, սարքեր և ապարատներ՝ 4.0%:

- Բացասական ազդեցություն են ունեցել՝ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ -15.8%, պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -13.3%, փայտ և փայտյա իրեր՝ -73.4%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -20.8%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ -3.0%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ -75.9%:

Արտահանման ծավալի աճ, %



Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



5.2 Ներմուծում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել ԱՊՀ երկրների գծով (2.0 անգամ), որից ԵԱՏՄ-ն՝ 2.0 անգամ: ԵՄ երկրների ներմուծումը կրճատվել է -9.4%-ով, իսկ Այլ երկրները՝ -6.7%-ով:

- Ներմուծման ծավալի աճը կազմում է 33.8%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Աճին դրական են նպաստել կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը՝ 11.6%, բուսական ծագման արտադրանք՝ 11.2%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 11.6%, պատրաստի սննդի արտադրանքը՝ 16.7%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 3.2%, հանքահումքային արտադրանքը՝ 0.3%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը՝ 1.8%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 21.2%, մանածագործական իրեր՝ 6.5%, փայտ և փայտյա իրեր՝ 6.3%, թուղթ և թղթից իրեր 8.5%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 8.6%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 2.7 անգամ, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 3.1%, մեքենաների սարքավորումներ և մեխանիզմներ՝ 7.1%, սարքեր և ապարատներ՝ 8.3%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 21.3%:
- Բացասական ցուցանիշներ են գրանցել՝ պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -2.1%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ՝ -48.9%, արվեստի ստեղծագործություններ՝ -56.4%:

Ներմուծման ծավալի աճ, %



Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



6. Արդյունաբերություն

- Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 4.7%: Հիմնական ճյուղերից աճ է գրանցել. մշակող արդյունաբերությունը՝ 6.5%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 12.6%, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը՝ 5.8%: Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը նվազել է -8.6%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ, %



6.1 Մշակող արդյունաբերություն

Մշակող արդյունաբերության ծավալում ենթաճյուղերից աճ են գրանցել՝ «Սննդամթերքի արտադրությունը» աճել է 5.6%-ով, «ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 12.6%-ով, «փայտանյութի մշակում, բացի կահույքից»՝ աճել է 22.5%-ով, «թղթի և թղթե արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 2.4%-ով, «պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացումը»՝ աճել է 3.5%-ով, «դեղագործական արտադրանքի արտադ-րությունը»՝ աճել է 10.8%-ով, «ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 6.8%-ով, «հիմնական մետաղների արտադրությունը»՝ աճել է 38.4%-ով, «պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 16.2%-ով, «համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրությունը»՝ աճել է 31.0%-ով, «էլեկտրական սարքավորանքի արտադրությունը»՝ աճել է 55.8%-ով, «կահույքի արտադրությունը»՝ աճել է 13.1%-ով, «մեքենաներիև սարքավորանքի նորոգում և տեղադրում» աճել է 3.8%-ով:

Ի հակադրություն վերոնշյալ ենթաճյուղերի նվազել են՝ «Խմիչքների արտադրությունը»՝ նվազել է -3.9%-ով, «հագուստի արտադրությունը»՝ նվազել է -3.3%-ով, «կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրությունը»՝ նվազել է -11.6%-ով, «մանածագործական արտադրատեսակների արտադրությունը»՝ նվազել է -2.8%-ով, «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը»՝ նվազել է -15.7%-ով, «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը»՝ նվազել է -16.8%-ով, «Մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում»՝ նվազել է -4.2%-ով, «այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն»՝ նվազել է -15.1%-ով, «արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում»՝ նվազել է -30.7%-ով: